

ԱՐՏԱՇԵՍ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՃԱՆԱՊԱՐՀԱՑՈՅՑ
ՋՈՒՂԱՅԵՑԻ ՊԵՏՐՈՍԻ ՈՐԴԻ ՀԱԿՈՒԻ

Քրիտանական թանգարանում Sloane 4090 (17) համարի տակ պահվում է հայերեն գրությամբ մի թերթ: Չինական թղթի վրա, երկու էջերում խիտ (յուրաքանչյուր էջում 40 տող) և անվարժ գրված այս գործը Ջուզայեցի Պետրոսի սրբի Հակոբի Ճանապարհացույցն է, որ նա գրել է Լոնդոնում 1676 թ. դեկտեմբերի 1-ին, այնտեղ նշված ճանապարհներն անձամբ անցնելուց հետո*:

Գրության նպատակն է ցույց տալ Իրանի տիրապետության սահմաններում գտնվող առևտրական գլխավոր ճանապարհների ուղղությունները, նրանց վրա գտնվող կարևոր կետերը և դրանց միջև եղած հեռավորությունները:

Ելման կետը Պարսից ծոցում Իրանի գլխավոր նավահանգիստ Բենդեր-Աբրասն է: Այստեղից դուրս է գալիս առաջին ուղին և ձգվում Պարսից ծոցի իրանական և արաբական ափերի կարևոր նավահանգիստները:

Երկրորդ ճանապարհն անցնում է ցամաքով: Այն դուրս է գալիս նույն տեղից, ձգվում դեպի արևմուտք, անցնելով Լար, Շիրազ, Սպահան, Ղազվին, Բավրիզ, Երևան քաղաքների վրայով, ավարտվում է Արզրումում:

Երրորդ ուղին իրանական տիրապետությունից դուրս է: Արզրումից, ավելի շուտ Բյուրակն լեռներից Նփրատի հոսանքով իջնում է մինչև Բաղդատ և Բասրա: Այստեղ միայն վերջին երկու քաղաքների հեռավորությունն է նշված:

Չորրորդ և ամենաերկար ուղին սկսվում է Բաղդատից, մտնում իրանական հող և Քերմանշահի վրայով ձգվում դեպի հյուսիս, մինչև Ղազվին: Այնտեղից իջնում է Ղում, ապա Քեհրանի վրայով գնում է մինչև Մեշհեա և երկ-ճյուղվում. մեկը հասնում է մինչև Ղանդահար (այժմ՝ Աֆղանստանում), մյուսը՝ Մերվ (այժմ՝ Ուզբեկստանում):

Հեղինակը մի քանի տեղերի վերաբերյալ է ժլատ տեղեկություններ տալիս, մյուս դեպքերում միայն վայրն է հիշում և հեռավորությունը՝ նախորդ կետից:

Տարածության չափի միավորներն են «լէկ»-ը (հավանաբար մղոնը) «օրէն ճանապարհ», որ լինում է ձիով և հեռակա, և «դունաղ»-ը (իջևան): Առաջինով ծովային ուղիներն են նշված, մյուսներով՝ ցամաքային: Հեռավորությունները գրված են հայերեն տառերով և միևնույն ժամանակ՝ թվանշաններով, ուր երբեմն տառը, երբեմն թվանշանն է առաջ գրված: Միօրինակության համար տառը գրել ենք առաջ, թիվը՝ հետ և առել կլոր փակագծերի մեջ:

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում «Ճանապարհացույցի» լեզուն, որ գրված է նոր Ջուզայի բարբառով: Հեղինակը հմուտ չէ հայերենին, այդ

* A catalogue of the Armenian Manuscripts in the British Museum, by Frederick Cornwallis Conybeare. London, 1913, էջ 303—304:

պատճառով շատ բառեր կրկնելիս, գրում է տարբեր տառադարձություններ: Հատկապես աղավաղված են հատուկ անունները: Մուրանկյուն <> փակագծերի մեջ տալիս ենք այդ անունների ուղիղ ձևը, ինչպես նաև օտար բառերի իմաստները:

Ներկայացնում ենք բնագիրը՝ Բրիտանական Թանգարանից ստացված միկրոժապավենից:

ՃԱՆԱՊԱՐՀԱՑՈՅՑ ՅԱԿՈԲԱՅ ՈՐԴԻՈՅ ՊԵՏՐՈՍԻ ԶՈՒՂԱՅԵՑԻՈՅ

Թվին ԹՁՃԶԶ—1676, դեկտեմբերի Ա (1) Լուսրայ <Լոնդոն> քաղաք 1ա Պատճառ գրքուս այս է, որ Հայջամբստանայ <Աջամստան> հայտայչին քսկայլեն <նավահանգիստ>, որ ծովի ափ, որ է այնունն Բայտար Արասի <Բենդեր-Արբաս>, որ տեղեն շուր ի Հոմուզ <Հուրմուզ> ծովի այտայ <կրդպի> այ, Ը (8) լէկ:

Յետու Ա (1) պօրտ <նավահանգիստ> կայ, այնունն Բատայր Քուկ <Քունկ> այ: Ա (1) պօրտ կայ, որեն անունն Մեղկատ <Մաղկետ>: Ա (1) պօրտ կայ, որ այնունն Բայտարայ <Բահրեին> այ, որ է Հայջամստանայ շահին օլբեն գաֆթ <իմա՝ շահի արապետության տակ է>:

Բայտայրեն, որ Գուլպետի՝ Լայո <Լար>, որ է Բատարեն շուր ի Լայո ճանապարհ օրեն ձիու է (7):

Յետ Լայոու շուր ի Զառում <Զերհում> քաղաք Զ (6) օրեն ճանապարհ: Զուռումու շուր ի Շերայզ <Շիրազ> քաղաքն ճանապարհ Զ (6) օրեն, որ է լէվ, մեծ քաղաք Շիրայզ, լէվ ջրեր, լէվ ախր[րներ]:

Յետ Շերայզու շուր ի Ըսպան <Սպահան> քաղաք, որ է Թագաուորն տեղն, կայ մէջումն Ա (1) գիտ, որ այնունն Զատայրբու <Զահինդերուզ>:

Գիտին էն յերեսն, որ Զուղայ և այլ տեղն, որ է բնակարան բրեստայն <բրիստոնյա>, որ իայ, հաւտան Քրիստոսի: Գիտուն վերայ Ա (1) կարմուճ, որ է անունն Զատայրու: Էս գիտուն վերայ Ա (1) կարմուճ կայ, որ է այնումն է Ալլավէրաի իսանուն կարմունճն, որ կայ շաշմայ <ակն, կամար>: Էս կարմունճս ԴԳ (94) շաշմայ <ձեռագրում՝ շաշմայ>, որ համէն շաշմայ եկլեզի <անդլիական> գայզ 12 կամ թէ 19 գայզ: Անց այ գիտուն էս ճանապարհն, որ գնայ Թարաուրին սայրեն <պալատ>, որ անումն Ալիզափին, որ ունի Ա (1) մետայնգ <հրապարակ>, շուրս կուղմն ու ուխտ քարով շենաց այոու, որ կայ մէջումն, շուրս կուղմէն շուր <ձեռագրում՝ շոր> է, և այս քաղաքս պարեսպն շենվածքն ուխտ խուզ այ, որ ունի էս բերթուս ԻԳ (24) գուան, որ անումն գարվայզ <գարպաս> այ: Սավայ <բացի> էս գարվայզէն կայ փորր գուան, բուլուրումն ԻԳ (24) պղտեկ գուան բերթուն, որ էս բերթն Բ (2) օրէ [ճան]ապարհ, որ բուլորել այ շուրս կուղմն:

Յետ բերտուն կայ Բ—Գ (2—3) օրեն ճանապարհ, որ է շուրս կուղման գեղէր՝ մեծ-պղտեկ, ուխտ 1120 գեղ բուլորուն Ըսպանայ քաղաքուն:

Յետու Ըսպանայ շուրս կուղմուն երկերն, որ գնայս դուրս Ըսպանայ շուր ի Քայշայն <Քաշան> քաղաքն Դ—Գ (4—3) օրեն ճանապարհ այ, որ է Ա (1) լէվ քաղաք:

Յետ Քայշանայ շուր ի Ղազվեն <Ղազվին> է (7) օրեն ճանապարհ այ:

Ղաչգվենու շուր ի Զարայգպէ <Զարայատ> 8 (Ը) օրէն ճանապարհ ալ: Զարայատ քաղաք ալ: Յետ Զարայատու շուր ի Թարվեղ <Թարվիղ> էլ քաղաք չկայ:

Զարայատուն շուր Ա. (1) գիտ կայ, որ է անունն Ղախայթու գետ, որ գնայ խառնվի Արաստին <Երասխ>, որ գնայ:

Ղաչրայ Դակուզն տեղէն շուր ի Թարվեղ քաղաքան ժԶ (16) օր ճանապարհ ալ:

Որ Ըսպանայ շուր ի Թարվեղ ԼԴ (34) դօնաղ օրէն ճանապարհ ալ: Որ է Թարվեղ լէվ, մեծ քաղաք:

Յետ Թարվեղու շուր ի Յարեվան <Երևան> քաղաքն ժԶ (16) օրէն ճանապարհ ալ:

Որ Ըսպանա շուր Յերևան քաղաքն է Մ (50) օր ճանապարհ ալ:

Որ է Աջամքստանայ շուր ի Խուսումայց <Հոսումաց> տուն, որ է հայտայչին քաղաքն, որ է այնումն Առդեռում:

Առդուռումու շուր ի Մուշ է (7) օրէն ճանապարհ ալ, որ խաչեվար կասէն սուրբ Կարապետ Մուշու Սուլտան:

Յարեվան քաղաքն Ա. (1) բերթ ալ, որ է էս բերթէս վերայ, այլու կռայն բերթին տակումն Ա. (1) գետ կայ, որ է անումն Զակու շայ <Զանգու>, որ էս գիտէս գլուխն գուլման Գելայն <Գեղամա՞լ> քաղաքէն գուլմայն:

Որ է Յէրեվան քաղաքէն շուր ի Առդեռում քաղաքն, որ է Օսլմալու <Օսմանլու> քաղաքն, որուն գրայտ <գրանտ, մեծ> թուրքին հառաչին քաղաքն: էս Առդուռում քաղաքս, որ է սարին անումն Մավալան դաղն <Բյուրակն լեռ>, որ էստեց ախրուր դուս գուլման, որ կայսեն թէ, որ Շայտին <Եփրատ> շուրն, որ էն սայրէն ալ դուրս գուլման, և այլ Արագին շուրն, որ կայ, էլ էն սարէն ալ գուլման: Որ տեղէն շուր ի Բաղդատ Շայտին շուրն ալ, որ Բաղդատ բերթին տակօվն անց կայ, որ Շատին վերայ կայ 160 քարքայ, որ կարմուշ ալ 1ք կապաց: || Բաղդատայ շուրս կուղմն՝ Գ (3) կուղմն պարեսպ ալ, Ա. (1) կողմն՝ Շայտն [ջ]ուր, որ էն Շայտն ալ, որ գնում ալ Պասրայ՝ խառնման մեծ ծովն:

ԻԳ (24) դունաղ ալ Բաղդատայ շուր Պաշտրայ: Բաղդատայ որ ուզես գնայս Ըսպան ալեալ որ Բաղդատայ դուս ելուս գնայ Գ—Ե (4—5) օրէ ճանապարհ, Ա. (1) գետ կայ, որ գնաման ալ՝ Դարրատն կայտեն, էն տեղէն շուր ի շային խուղն <շահի հողն> Բ—Գ (2—3) սահաթէն ճանապարհ ալ:

Յետու տեղէն շուր ի Քրմանշայ <Քիրմանշահ> Ա. (1) լէվ բերթ ալ, Ա. (1) սարի վերա, որտեղն կայ Ա. (1) խան, որ ԻԲ (22) օրէն ճանապարհ ուր դա[ւ]թումն ալ <իմա՞ տիրապետութեան տակ է>: Քրմանշայ Բ (2) դունաղ գնայս դէպի Համատան քաղաքն, կայ Ա. (1) գետ, որ գնամ ալ խառման Շայտն էն շուրն, որ էնունն Փալայվօրդ գետ:

Տեղէն շուր Համատան քաղաքն դունաղ ձիայն ժԳ (13) օր:

Որ Քրմանշայու խետ շուր ի Համատան քաղաք, Համատանայ շուր ի Ղաչգվեն քաղաք ժԱ. (11) օրէն ճանապարհ ալ:

Ղաչգվենու խետ, որ կուզի գնայ դայս ի Մայշտան <Մեշհետ> քաղաք կայ, շառաչին քաղաքն, որ է անումն Ղում ալ:

Որ քաղաք Ղաչգվենու շուր ի Ղում Ը (8) օրէն ճանապարհ ալ:

Ղումու շուր ի Թերայն <Թեհրան> ժԲ (12) օրէն ճանապարհ ալ:

Թերանայ կասկերա է (7) դունաղ ալ:

- կասկերտու շուր ի Դեղմային <Դամղան> Թ (9) զունաղ ալ: Քաղաք ալ:
 Դղմանայ շուր ի Մաղինան քաղաք ժԵ (15) զունաղ ալ:
 Մաղինան շուր ի Նշարուր <Նիշարուր> որ քաղաք, որ ինչ փիրուզայ կայ,
 ուխտ տեղէն այն գուն, որ է էնումն Ֆաղեվար <Ֆրանսերեն> Թուրքեշայ:
 Նշարուրու շուր ի Սավեար <Սերգևար> Զ (6) զոն[աղ] ալ:
 Սավեարու <Սերգևար> շուր ի Մեշեա քաղաք ժԲ (12) օ(ր) զոնաղ ալ,
 որ է զգալրայշի մեծ փիրին տեղըն, որ անումն Իմամ Ըռեղ <Ռեղա> ալ, որ
 մեծ բերթայարեսայ ա, որ էն եմամն Ա (1) մաշեթ կայ, որ անումն Իմամ
 Ըռաղ ալ, որ է զորեթն <զմբեթ>, որ ուխտ ուսկի քառփեշ <աղյուս> ալ, շէքն
 որ շենաց ալ:
 Մեշայտու իւեա գնայ, որ Ղազվենու շուր Մաշատն ԽԴ (44) զունաղ ալ:
 Մաշայտէն շուր ի Ղուռիայն Զ (6) զունաղ ալ, քաղաք ալ:
 Ղուռիանու շուր ի Հարաթ էլ ժ (10) զունաղ ալ, որ մեծ քաղաք ալ, մեծ
 սարեսայ ալ:
 Հարաթայ շուր ի Սավար <Սարգևար Շենդան> զունաղ ալ է (7):
 Սավարու շուր ի Թապալս քաղաքն ժԱ (11) զունաղ ալ:
 Թապալսէն շուր ի Քուշքնուխտան Թ (9) զոնաղ [ալ]:
 Քուշքնուխտան շուր ի Ղազարի <Ղանդահար> մեծ քաղաքն ժԲ (12)
 օրէն զոն [աղ ալ]:
 Որ Կառիմայշ շուր ի մեծ քաղաք Ղատայարն զոնաղ Մաշատէն ԽԴ (44):
 Որ Ըսպանայ շուր ի մեծ քաղաքն Ղայտարու զունաղ ալ 11 օ[ր] զոն[աղ]:
 Մաշատէն շուր Մավր քաղաք, որ է մեծ բերթ զգիլրայշին ալ: Մաշատէն շուր
 ի Մավր ժԸ (18) [ղ]ունաղ ալ, որ է Եղբուքին <Ողբեքին> բուղն:
 Մաշատէն շուր ի Մարիշաղն Ի (20) զունաղ ալ, շուր ի Ողբեքրստայն բու-
 զայշն ալ, որ Հայշամբստանայ շահին ալ, որ տեղէն որ եստուր ուխտ Տահին
 <շահին> մին բերթով քաղաք ալ, որ ես Զուղայեցի Պեարոսի որդի Հակուրս
 գրեցի ի Լուարայ իմ խարարի քաղաքս ալ, որ ես տեսէլ ամ...

А. С. МАТЕВОСЯН

«ПУТЕВОДИТЕЛЬ» АКОПА ДЖУГАЕЦИ

Резюме

Оригинал «Путеводителя» хранится в Британском музее за № 4090 (17) и представляет собой содержание листка на армянском языке. Это запись, сделанная купцом Акопом Джугаеци, сыном Петроса Джугаеци, 1 декабря 1676 г. в Лондоне, о важных торговых путях, по которым он проезжал. Он описывает эти пути, их этапы, расстояния между ними. Автор сообщает также некоторые сведения о величине отдельных городов, о состоянии их торговли и т. д. Большой интерес представляет язык «Путеводителя» — разговорный язык армян Новой Джульфы.

A. S. MATEVOSSIAN

LE „GUIDE ROUTIER“ DE HAKOB FILS DE PETROS DE DJOULFA

Le texte que présente l'auteur—notes relatives aux principales routes commerciales, stations et distances entre elles, transcrites à Londres le 1-er décembre 1676 par un marchand arménien originaire de Djoulfa Hakob fils de Pétros—est tiré d'un feuillet arménien conservé au Musée Britannique (Sloane 4090(17)).

Ce guide comporte également des renseignements sur l'importance des villes, du commerce qui s'y fait, etc. La langue de l'ouvrage est représentative du dialecte arménien de la Nouvelle Djoulfa, d'autant plus qu'on la doit à un marchand quasi—illettré.